

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՖԻԴԱՆՅԱՆ ԱՐԱ ԽՈՐԵՆԻ

**ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ
ՔՐԵՄԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

**ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա,
քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФИДАНЯН АРА ХОРЕНОВИЧ

**УГОЛОВНО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ВЫДАЧИ
ЛИЦ, СОВЕРШИВШИХ ПРЕСТУПЛЕНИЕ**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата
юридических наук по специальности
12.00.05 – «Уголовное право и криминология;
уголовно-исполнительное право»**

ЕРЕВАН-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում
Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ **Ս. Վ. Առաքելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Գաբուզյան**
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Վ. Ս. Տեր-Պետրոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. մայիսի 12-ին, ժամը 14³⁰-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան-0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2015թ. ապրիլի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու

Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, доцент **С. В. Аракелян**

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор **А. А. Габузян**

кандидат юрид. наук, доцент **В. М. Тер-Геворгян**

Ведущая организация: **Российско-Армянский (Славянский) университет**

Защита диссертации состоится 12-го мая 2015 г. в 14³⁰ ч. на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван-0025, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников Ереванского государственного университета.

Автореферат разослан 10-го апреля 2015 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук

А. А. Манасян

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հանցանք կատարած անձանց հանձնումը քրեական հետապնդում իրականացնելու կարևորագույն փուլերից մեկն է: Այն կարգավորվում է իրավունքի մի շարք ճյուղերի դրույթներով՝ սահմանադրական իրավունքի, քրեական իրավունքի, քրեադատավարական իրավունքի, միջազգային քրեական իրավունքի: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը, միանալով մի շարք միջազգային կոնվենցիաների և կնքելով բազմաթիվ երկկողմ ու բազմակողմ համաձայնագրեր հանցանք կատարած անձանց հանձնման վերաբերյալ, ստանձնել է նաև որոշակի լրացուցիչ պարտավորություններ:

Հետևաբար, առաջին հայացքից կարող է թվալ, որ հանցանք կատարած անձանց հանձնումն ամբողջովին կարգավորված է ինչպես ազգային օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային իրավական նորմերով, և որևէ բաց լինել չի կարող: Դրա մասին կարող են վկայել նաև Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող հանձնման ծավալները: Այսպես, միայն 2014 թվականի ընթացքում հանցանք կատարած անձանց հանձնելու վերաբերյալ արտասահմանյան երկրների իրավասու մարմիններին ուղարկվել է 91 հայցադիմում և ստացվել 22-ը: Նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին է հանձնվել 50 հետախուզվող, ինչը բավականին բարձր ցուցանիշ կարելի է համարել, քանի որ այն կազմում է Հանրապետության տարածքում ընդհանուր առմամբ հայտնաբերված 819 հետախուզվողների (բացառությամբ քրեական օրենսգրքի 327 հոդվածի հատկանիշներով հետախուզվողների) 6%-ը: Միևնույն ժամանակ, 2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից այլ երկրների իրավապահ մարմիններին են հանձնվել հետախուզման մեջ գտնվող 17 անձինք:

ՀՀ գլխավոր դատախազության և ոստիկանության պաշտոնական տվյալների համաձայն, վերջին հինգ տարիների ընթացքում հանձնման վերաբերյալ ուղարկված և ստացված միջնորդությունների, ինչպես նաև ՀՀ իրավապահ մարմիններին հանձնված և ՀՀ-ից այլ երկրների իրավապահ մարմիններին հանձնված հետախուզվողների քանակը հետևյալ պատկերն ունի.

	2014 թ.	2013 թ.	2012 թ.	2011 թ.	2010 թ.
ուղարկվել է հայցադիմում	91	77	69	82	82
ստացվել է հայցադիմում	22	27	22	30	27
հանձնվել է ՀՀ մարմիններին	50	61	48	61	63
հանձնվել է այլ երկրների մարմին	17	14	8	8	10

Վերլուծելով ներկայացված թվերը՝ կարելի է հանգել եզրակացության, որ վերջին հինգ տարների ընթացքում թե՛ ուղարկված և ստացված միջնորդությունների և թե՛ ՀՀ հանձնված և ՀՀ-ից հանձնված հետախուզվող անձանց թվաքանակը էական փոփոխությունների չի ենթարկվել:

Հանցանք կատարած անձանց հանձնման գործնական փուլում, ինչպես նաև բուն հանձնելուն նախորդող և հաջորդող գործընթացներում, սակայն, ծագում են բազմաթիվ և բազմապիսի խնդիրներ:

Հանցանք կատարած անձանց հանձնելու առանձնահատկությունն այն է, որ այդ գործընթացը չի կարող կարգավորվել միայն մեկ երկրի ազգային օրենսդրությամբ: Անհրաժեշտ է միանգամից մի քանի իրավական դաշտերի համակարգված գործունեության ապահովում: Այդ գործընթացը կարգավորվում է առնվազն երկու երկրների՝ հայցող և հայցվող, ազգային օրենսդրություններով, այդ երկրների միջև կնքված միջազգային պայմանագրերով կամ համապատասխան կոնվենցիաներով: Այսինքն, հանցանք կատարած անձանց հանձնելու համար անհրաժեշտ է, որ առնվազն երեք իրավական դաշտեր պարունակեն հանձնման համար անհրաժեշտ դրույթներ: Այն կարող է բավականին բարդ թվալ, սակայն գարծնականում պետությունների մեծ մասն իրենց ազգային օրենսդրություններում և երկկողմ ու բազմակողմ պայմանագրերում համնձնման վերաբերյալ դրույթներ նախատեսելիս հիմնվում են միջազգայնորեն ընդունված սկզբունքների վրա:

Բնականաբար, այդ սկզբունքները տեղայնացնելով, երկրները, հաշվի առնելով իրենց իրավական, ազգային և այլ առանձնահատկությունները, կատարում են որոշ փոփոխություններ և բացառություններ: Բացի այդ, հանձնման գործընթացին առնչվող ոչ բոլոր հանգամանքներն են կարող նախատեսվել կամ ընդգկվել միջազգային սկզբունքներում: Դրանք էլ հնարավորինս իրենց ամրագրումն են գտնում ազգային օրենսդրություններում:

Հետևաբար, սխալ կլինի ասել, թե այդ խնդիրները ծագում են միայն ՀՀ օրենսդրության շրջանակներում: Գրեթե նույնաբովանդակ խնդիրներ ծագում են շատ ու շատ երկրներում: Կարծում ենք, գոյություն չունի որևէ միջոց, որն ամբողջովին և սպառիչ կերպով կկարգավորի այս ոլորտը: Առաջին հերթին դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տարբեր երկրներ, ունենալով իրենց սեփական օրենսդրությունը և շահերը՝ տարբեր պահանջներ են ներկայացնում հանցանք կատարած անձանց հանձնելիս: Ռիստի տվյալ խնդրի լուծման միակ հավանական տարբերակ կարող է հանդիսանալ մեկ միասնական օրենսդրության ստեղծումը, որն, այս պահին, թերևս, անիրատեսական է թվում: Համաշխարհային գլոբալացման ներկայիս տեմպերի պարագայում, սակայն, դա կարող է և իրականություն դառնալ:

Բացի օրենսդրականից կան նաև առնվազն երկու այլ հանգամանքներ, որոնք իրենց ազդեցությունն ունեն ոլորտի կարգավորման վրա և պարտադիր պետք է հաշվի առնվեն:

Նախ, հանցանք կատարած ոչ մի անձ չպետք է խուսափի պատասխանատվությունից: Հանցանք կատարելուց հետո, որտեղ էլ որ հանցավորը գտնվի, որ երկրում էլ որ թաքնվի, նա անպայման պետք է նույնականացվի, պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ վերջինիս հայտնաբերելու ուղղությամբ, որից հետո միայն, հիմնվելով համաձայնագրերի և կոնվենցիաների վրա, կայացվի հետևյալ որոշումներից որևէ մեկը. կա՛մ հանձնվի այն երկրին, որը հայցում է ներկայացրել, կա՛մ դատապարտվի այն երկրում, որտեղ հայտնաբերվել է:

Երկրորդ հանգամանքն այն է, որ հանձնման մասին որոշում կայացնելիս չպետք է խախտվեն քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանման միջազգային իրավունքի նորմերը: Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել նաև հայցող և հայցվող երկրների միջև առկա քաղաքական, տնտեսական, պատմական, մշակութային կապերն ու հարաբերությունները:

Բացի այդ, քննարկվող գործընթացում ներգրավված են մի շարք պետական գերատեսչություններ՝ ոստիկանություն, դատախազություն, արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, դատական մարմիններ, քրեակատարողական ծառայություն և այլն: Ուստի, կարևորվում է նաև նշված մարմինների գործունեության պատշաճ համակարգումը:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում տեսական պատշաճ խորությամբ ուսումնասիրել և վեր հանել հանցանք կատարած անձանց հանձնելու գործընթացում ծագող խնդիրները, դրանց հիմքերն ու պատճառները, դրա հիման վրա մշակել և առաջարկել այն հավանական ուղիները, որոնք թույլ կտան հնարավորինս նվազագույնի հասցնել գործընթացի ընթացքում ծագող խնդիրները: Այս ամենը, բնականաբար, կնպաստի թե՛ հանցանք կատարած անձանց հանձնելու աշխատանքներին ներգրավված իրավասու մարմինների առավել արդյունավետ և հստակ գործունեությանը և թե՛ այլ երկրների հետ այս ոլորտում հարաբերությունների կանոնակարգմանը:

Համալիր և բազմակողմանի հետազոտության անհրաժեշտություն են ենթադրում նաև հանցանք կատարած անձանց հանձնելու քրեաիրավական հիմնախնդիրները: Մասնավորապես, կարծում ենք, որ օրենսդրական կարգավորման և հստակեցման կարիք ունեն հանցանք կատարած անձանց հանձնելու հասկացությունը, պարտադիր պայմանները, մերժելու հիմքերը և այլն:

Վերոհիշյալ հանգամանքները վկայում են, որ հանցանք կատարած անձանց հանձնելու գործընթացի ուսումնասիրությունը թե՛ տեսական և թե՛ գործնական կարևոր նշանակություն ունի, ինչն էլ պայմանավորում է ատենախոսական սույն հետազոտության հրատապությունը և դրա թեմայի արդիականությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Հանցանք կատարած անձանց հանձնելու հիմնախնդիրներին անդրադարձել են մի շարք հեղինակավոր գիտնականներ, մասնավորապես՝ Ա. Բոյցովը, Ն. Մացնևը, Բ. Վոլժենկինը, Յու. Վոլկովը, Յու. Գոլիկը, Ի. Ջվեչառովսկին, Վ. Կոմիսարովը, Վ. Կոնյախինը, Ա. Կորոբեևը, Լ.

Կռուզլիկովը, Ս. Միլյուկովը, Մ. Մինենոկը, Ա. Պոպովը, Ա. Ստուկանովը, Ա. Տարբագաևը, Ա. Ֆյոդորովը, Ա. Էկսարխոպուլոն, Յու. Վասիլևը, Վ. Վոլժեննիկնան, Գ. Դաշկովը, Յու. Մինյուկովան, Ի. Կարպեցը, Ի. Լուկաշուկը, Վ. Մալցևը, Ա. Նաումովը, Մ. Շարգորոդսկին և այլոք:

Հանցանք կատարած անձանց հանձնելու հիմնախնդրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում հատուկ համալիր հետազոտություններ գրեթե չեն իրականացվել: Կատարված ուսումնասիրությունների շարքում, թերևս, կարելի է առանձնացնել Դ. Ավետիսյանի, Վ. Հովհաննիսյանի և Ա. Մանուկյանի ուսումնասիրությունները, որոնցում որոշ չափով անդրադարձ է կատարվում նաև հանցանք կատարած անձանց հանձնելու քրեաիրավական, քրեադատավարական և միջազգային-իրավական հիմնախնդիրներին:

Միաժամանակ պետք է փաստել, որ սույն ատենախոսությամբ հետազոտության թեման ամբողջովին չի սպառվում, և քննարկվող ոլորտի մի շարք հիմնախնդիրներ հետագա ուսումնասիրությունների կարիք ունեն:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան են հանցանք կատարած անձանց հանձնելու հասկացությունը և սահմանումը, իրավական հիմքերը, կարգավորման օրենսդրական դաշտը, միջազգային կոնվենցիաներն ու պայմանագրերը, տարբեր երկրների մոտեցումները, հանձնման ենթակա անձինք, հանձնումը մերժելու հիմքերը:

Հետազոտության օբյեկտը հանցանք կատարած անձանց հանձնելու քրեաիրավական հիմնախնդիրներն են:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսական սույն հետազոտության հիմնական նպատակներն են հանցանք կատարած անձանց հանձնելու քրեաիրավական հիմնախնդիրների ամբողջական, համակողմանի վերլուծությունը, ինչպես նաև դրա հիման վրա այս ոլորտում տեսական, գործնական և օրենսդրական հիմքերի կատարելագործման նպատակով առաջարկությունների մշակումն ու առաջ քաշումը:

Նշված նպատակների իրականացմամբ է պայմանավորված հետևյալ հետազոտական խնդիրների լուծման անհրաժեշտությունը՝

- ուսումնասիրել հանցանք կատարած անձանց հանձնելու հասկացությունն ու սահմանումը, դրա հատկանիշները,

- վերլուծել ՀՀ քր. օր.-ի հոդված 16-ը (Հանցանք կատարած անձանց հանձնելը), ինչպես նաև դրան առնչվող քրեաիրավական այլ դրույթները՝ արտահանձնման ինստիտուտի հետագա զարգացման նպատակով,

- վերլուծել միջազգային կոնվենցիաները, այդ կոնվենցիաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության առանձնահատկությունները, կնքված երկկողմ և բազմակողմ պայմանագրերը, դրանց առանձնահատկությունները, հիմնարար դրույթները, հարաբերակցությունը Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության հետ,

- հետազոտել Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող՝ հան-

ցանք կատարած անձանց հանձնելու գործընթացը,

- բացահայտել հանցանք կատարած անձանց հանձնելու ընթացքում ծագող խնդիրները, տարբեր երկրների մոտեցումներն այդ խնդիրների լուծման հարցում,

- մշակել ՀՀ քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքն է կազմում հետևյալ մեթոդների ամբողջականությունը. իրավաբանական մեթոդ (որի էությունը հանցանք կատարած անձանց հանձնելուն առնչվող իրավադրույթների մեկնաբանումն է, ինչպես նաև դրանց կատարելագործման նպատակով առաջարկությունների ներկայացումը), համակարգման մեթոդ (համաձայն որի, հանցանք կատարած անձանց հանձնելու հիմնախնդիրները դիտարկվել են դրանց դիալեկտիկական միասնության տեսանկյունից), վիճակագրական մեթոդ (համաձայն որի, մշակվել և ուսումնասիրվել են հանցանք կատարած անձանց հանձնելու հիմնախնդիրն առնչվող վիճակագրական տվյալները), իրավահամեմատական մեթոդ (ըստ որի, համադրվել են տարբեր իրավական համակարգեր՝ արտահանձնման վերաբերյալ ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկություններ ներկայացնելու համար), վերլուծական մեթոդ (համաձայն որի, վերլուծվել են արտահանձնման վերաբերյալ տարբեր իրավական համակարգերի համապատասխան դրույթներն ու ստացված վիճակագրական տվյալները):

Փորձառնական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով հետազոտության ընթացքում իրականացվել է նաև իրավակիրառ պրակտիկայի վերլուծություն՝ գործնականում արտահանձնմանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրման, վերլուծության, ինչպես նաև այդ հիմնախնդիրներին իրավական լուծումներ առաջարկելու նպատակով:

Վերը նշված գիտական մեթոդների կիրառումն ապահովել է ատենախոսական հետազոտությանը ներկայացվող համալիր և միջճյուղային մոտեցման պահանջների կատարումը:

Ատենախոսության տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքն են կազմում քրեական, քրեադատավարական, սահմանադրական, քրեակատարողական, միջազգային, միջազգային քրեական իրավունքի ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների հիմնարար աշխատությունները: Օգտագործվել են նաև ՄԱԿ-ի և Միջազգային քրեական ոստիկանական կազմակերպության՝ Ինտերպոլի գլխավոր ասամբլեաների որոշումները, գիտագործնական համաժողովների, սեմինարների բազմաթիվ նյութեր:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիության մասին օրենքը, ՀՀ զինապարտության մասին օրենքը և այլ օրենսդրական ու ենթօրենսդրական ակտեր, Հանձնամն մասին Եվրոպական կոնվեն-

ցիան, ԱՊՀ երկրների Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիան, ՀՀ կողմից ստորագրված երկկողմ և բազմակողմ պայմանագրերը, ինչպես նաև արտասահմանյան տարբեր երկրների, մասնավորապես՝ ԱՊՀ անդամ պետությունների, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և մուսուլմանական մի շարք երկրների քրեական և քրեադատավարական օրենսգրքերը:

Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել 2010-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ստացված արտասահմանյան երկրների իրավասու մարմինների միջնորդությունները հանցանք կատարած անձանց հանձնելու վերաբերյալ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից ներակյացված նույնաբովանդակ միջնորդությունների ուսումնասիրության արդյունքները:

Բացի այդ, ուսումնասիրվել և վերլուծվել են հանցանք կատարած անձանց հանձնելու վերաբերյալ համաշխարհային պրակտիկայում առավել հայտնի և հնչեղություն ունեցած գործերը, դատական գործընթացները և դրանցով կայացված որոշումները:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հանցանք կատարած անձանց հանձնելու քրեաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ կատարված համակողմանի և համալիր հետազոտություն է, որի արդյունքները կարող են կիրառվել հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են կիրառելի լինել հասարակության և պետության կենսագործունեության հետևյալ ոլորտներում՝

- ՀՀ գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում,
- հանցավորության կանխարգելման ոլորտում,
- գիտամանկավարժական գործունեության ընթացքում՝ քրեական իրավունք, քրեական դատավարություն, միջազգային քրեական իրավունք դասավանդելիս,
- իրավակիրառական պրակտիկայում՝ հանցանք կատարած անձանց հանձնելու գործընթացի առավել հստակ կանոնակարգման և իրականացման նպատակներով,
- մեթոդաբանական և կիրառական այլ նպատակներով:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնում, ինչպես նաև ներկայացված են հեղինակի կողմից ատենախոսության

թեմայով հրապարակած և դրա բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներում:

Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Հետազոտության գիտական նորույթն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ հանցանք կատարած անձանց հանձնելու քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրները տեսական գրականության մեջ, հետևաբար նաև գործնականում, բավարար չեն մշակվել: Մասնավորապես, քիչ են ուսումնասիրվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են. հանցանք կատարած անձանց հանձնելու բուն հասկացությունը, տարբերությունը նմանատիպ այլ գործընթացներից, արտահանձնման հիմքերը, պարտադիր պայմանները, արտահանձնումը մերժելու հիմքերը, սեփական քաղաքացիների և երկքաղաքացիություն ունեցող անձանց արտահանձնման գործընթացը, քաղաքական հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց արտահանձնումը և այլն: Բացի այդ, կատարելագործման կարիք ունի ՀՀ քրեական գործող օրենսդրությունը, հատկապես այն պարագայում, որ քրեական նոր օրենսդրության հայեցակարգի և օրենսգրքի նախագծի ստեղծման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում`

1. Եթե երկու երկրների քրեական օրենսդրություններում հանցավոր արարքի անվանումը և հատկանիշները համընկնում են, ապա երկկողմ հետապնդումը, որպես հանցանք կատարած անձին արտահանձնելու նախապայման, առկա է, և հանձնող երկիրը չի կարող մերժել արտահանձնումը զուտ հանցագործության առարկայի տարբերության հիմքով:

2. Արտահանձնման վերաբերյալ միջազգային պայմանագրերում, որպես կանոն, սահմանված չէ, թե արդյոք այդ պայմանագրերը տարածվում են մինչ դրանց ստորագրումն ու վավերացումը հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձանց արտահանձնելու դեպքերի վրա: Քանի որ արտահանձնումը ոչ թե պատիժ է, այլ իրավական օգնություն ցուցաբերելու միջոց, այն չի կարելի նույնացնել արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքին: Ուստի, այն կիրառելի է նաև մինչև նման պայմանագրի ստորագրումը կատարված հանցանքների կապակցությամբ: Սակայն ճիշտ կլիներ, եթե այս դրույթը միշտ նախատեսվեր համապատասխան միջազգային պայմանագրում:

3. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 15-ի 2-րդ մասի դրույթների համաձայն, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձինք, քրեական օրենսգրքով նախատեսված խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված և կոռուպցիոն բնույթի հանցագործություններ կատարելու համար ենթակա են

քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ անկախ հանցանքը կատարելու վայրի պետության քրեական օրենսգրքով այդ արարքը նախատեսված լինելուց կամ չլինելուց: Հաշվի առնելով, որ վերոհիշյալ հանցագործությունների ցանկը պարբերաբար կարող է փոփոխվել, նպատակահարմար է քննարկվող հոդվածում սպառիչ ցանկ չսահմանել, այլ նշել, որ դրանք նախատեսված են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով:

4. Տարբեր երկրներում անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքը տարբեր է, ուստի չի բացառվում, որ դատապարտված անձը, որը տվյալ երկրում հանցագործության սուբյեկտ է, պատժի հետագա կրման նպատակով փոխանցվի այն պետությանը, որի քաղաքացին է, սակայն այդ երկրի օրենսդրությամբ հանցագործության սուբյեկտ չհամարվի: Քանի որ թե՛ միջազգային կոնվենցիաներով, թե՛ ՀՀ ազգային օրենսդրությամբ այս հանգամանքը կարգավորող որևէ դրույթ չկա, անհրաժեշտ է ընդունել միջազգային համապատասխան փաստաթուղթ, որը կկարգավորի տվյալ հարցի լուծումը: Որպես հնարավոր լուծման տարբերակ առաջարկում ենք այդ անձի փոխանցումից հետո կիրառել անվտանգության միջոցներ՝ դրանք նախատեսելով ՀՀ քրեական օրենսգրքում:

5. Հովանավորչության սկզբունքը՝ սեփական քաղաքացիների արտահանձնումը մերժելը, պետք է օբլիգատիվ բնույթ կրի (խոսքը չի վերաբերում միջազգային քրեական դատարաններին անձանց փոխանցելու դեպքերին): Ավելին, օրենսդրորեն պետք է սահմանել, որ այն տարածվում է նաև ազգությամբ հայերի նկատմամբ՝ անկախ նրանց քաղաքացիությունից:

6. Արտահանձնման համար կարևոր է հայցվող անձի քաղաքացիությունը ստանալու ժամանակահատվածի պարզաբանումը, ինչը ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ: Այս առումով անհրաժեշտ է համապատասխան դրույթ սահմանել ՀՀ օրենսդրությամբ և հայցվող անձի քաղաքացիությունը որոշել արտահանձնման մասին հայցադիմումը ստանալու պահի դրությամբ՝ այդ պահից կասեցնելով անձին քաղաքացիություն շնորհելու գործընթացը:

7. ՀՀ օրենսդրությամբ անհրաժեշտ է կարգավորել նաև միջազգային քրեական դատարաններին հանցանք կատարած անձանց փոխանցելու դեպքերը՝ այդ թվում սահմանելով միջազգային քրեական տրիբունալներին ընդդատյա գործերով միջազգային հետախուզման մեջ գտնվող անձանց ՀՀ տարածքում հայտնաբերելիս ՀՀ իրավասու մարմինների լիազորությունները:

8. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 10-ի 2-րդ մասով ամրագրված է համընդհանուր non bis in idem սկզբունքը: Սակայն, նպատակահարմար է սահմանել նաև այս դրույթի բացառություն: Մասնավորապես, ՀՀ քր. օր-ի հոդված 15-ում անհրաժեշտ է նախատեսել այնպիսի դրույթ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացիների դեմ ուղղված ծանր և առանձնապես ծանր հանցանք կատարած անձը, անկախ դրա կատարման վայրից, ենթակա է

քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե մեկ այլ երկրում այդ արարքի համար նրա նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել կամ նա ենթարկվել է պատասխանատվության, որը, սակայն, նպատակ է ունեցել անձին զերծ պահելու Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության ենթարկելուց, կամ այնպիսի քննություն է իրականացվել, որը չի համապատասխանում միջազգային արդարադատության սկզբունքներին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված յոթ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, արտացոլված է թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության առարկան և օբյեկտը, դրա նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական, տեսական, նորմատիվ և փորձառնական հիմքերը, ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը, ատենախոսության գիտական նորույթը, աշխատության կառուցվածքն ու ծավալը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության *առաջին գլուխը* (Հանցանք կատարած անձանց հանձնելու հասկացությունը) բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում` «Հանցանք կատարած անձանց հանձնելու հասկացությունը, դերը և նշանակությունը» վերատառությամբ, ներկայացվում է հանցանք կատարած անձանց հանձնելու ինստիտուտի կարևորությունը և դերը, մանրամասն վերլուծվում են հանցանք կատարած անձանց հանձնելու հասկացության վերաբերյալ մոտեցումները: Առանձին ուշադրություն է դարձվում ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում կիրառվող «Հանցանք կատարած անձանց հանձնել» եզրույթին, դրա համապատասխանելիությանն այն անձի իրավական կարգավիճակին, ով ենթակա է արտահանձնման: Զուգահեռաբար ներկայացվում են մասնագիտական գրականության մեջ առկա և այլ երկրներների օրենսդիրների մոտեցումներն այս հարցի առնչությամբ: Արդյունքում, եզրակացություն է արվում, որ «Հանցանք կատարած անձանց հանձնելը» եզրույթը չի համապատասխանում արտահանձնման ենթակա անձանց իրավական կարգավիճակին, հակասում է անմեղության

կանխավարկածի սկզբունքին, և առաջարկվում է այն փոխարինել «Արտահանձնում» եզրույթով:

Միաժամանակ, վերլուծության են ենթարկվում արտահանձնման ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 16-ով սահմանված նպատակը՝ «քրեական պատասխանատվության ենթարկելը»: Այս առումով նույնպես հեղինակը եզրակացնում է, որ արտահանձնման ենթարկված անձի իրավական կարգավիճակի հստակեցման խնդիր կա, քանի որ չի բացառվում, որ արտահանձնումից հետո անձը, ով համարվում է մեղադրյալ, չենթարկվի քրեական պատասխանատվության: Այդ իսկ պատճառով առաջարկվում է օգտագործել «քրեական հետապնդում իրականացնելու նպատակով» եզրույթը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Հանցանք կատարած անձանց վերադարձման այլ միջոցները» վերատառությամբ, հեղինակն անդրադառնում է քրեական հետապնդումից և պատժի կրումից խուսափող անձանց վերադարձման այլ միջոցներին, որոնք, թեև, նման են արտահանձնման ինստիտուտին, սակայն էականորեն տարբերվում են դրանից: Մասնավորապես, ուսումնասիրվել են առավել տարածված միջոցներն ու հնարքները, որոնք կիրառվում են տարբեր երկրների իրավապահ մարմինների կողմից՝ հանցանք կատարած անձանց վերադարձնելու համար:

Այս առումով, նախ, անդրադարձ է կատարվում դատապարտյալների փոխանցման ինստիտուտին: Ընդգծվում է, որ, չնայած դատապարտյալների փոխանցումը բավականին նման է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 16-ով նախատեսված՝ պատժի կրումից խուսափող անձանց հանձնելու դրույթներով կարգավորվող գործընթացին, այդուամենայնիվ, այս երկու ինստիտուտները էականորեն տարբերվում են միմյանցից: Մասնավորապես, պատժի հետագա կրման նպատակով դատապարտյալների փոխանցման դեպքում դատապարտյալն արդեն իսկ կրում է իր պատիժը հայցվող երկրում, չի խուսափում արդարադատությունից, այլ ընդամենը փոխանցվում է այն երկրին, որի քաղաքացին է՝ հետագա պատիժն իր երկրում կրելու նպատակով, ինչը կարող է իրականացվել միայն իր՝ դատապարտյալի համաձայնությամբ: Մինչդեռ, արտահանձնման պարագայում անձը խուսափում է պատասխանատվությունից և, բնականաբար, իր կամքով չէ վերադարձվում այն երկիր, որտեղ պետք է իրականացվի քրեական հետապնդում:

Բացի դրանից, անդրադարձ է կատարվել անձանց փոխանցելու և հանձնելու ինստիտուտների առանձնահատկություններին: Ընդգծվել է, որ սրանք նույնպես չի կարելի նույնացնել արտահանձնման հետ: Այդ առումով ներկայացվել են այն իրավական հիմքերը, որոնց պարագայում կարող է իրականացվել փոխանցում և հանձնում: Մասնավորապես, քննարկվել են Միջազգային քրեական դատարանի կանոնակարգի (որը ստորագրվել, սակայն դեռևս չի վավերացվել ՀՀ կողմից) հոդված 102-ը և Եվրոպական կալանքի սանկցիայի ու Եվրոպական միության անդամ երկրների միջև անձանց փոխանցման մասին Եվրոպայի խորհրդի 2002

թվականի հունիսի 13-ի 2002/584/JHA որոշման համապատասխան դրույթները, որոնցով հստակ սահմանազատվում են «փոխանցում» և «արտահանձնում» հասկացությունները:

Արտաքսումը ևս դիտվել է որպես արտահանձնման այլընտրանք, քանի որ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու կամ բնակվելու օրինական հիմքերի բացակայության դեպքում անձը ենթակա է արտաքսման այն երկիր, որի քաղաքացին է, կամ որտեղից ժամանել է: Հետևաբար, եթե նրանք հետախուզվում են քրեական հետապնդումից կամ պատժի կրումից խուսափելու համար, արտաքսման դեպքում կարող են վերադարձվել այդ երկրներ: Միաժամանակ, ներկայացվում են արտահանձնման և արտաքսման տարբերությունները, որոնք էական նշանակություն ունեն հատկապես իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության ապահովման համար:

Ուսումնասիրվել են նաև այլ միջոցներ, որոնք կիրառվում են տարբեր երկրների իրավապահ մարմինների կողմից՝ հետախուզվող անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով: Դրանք են՝ խաբկանքի կիրառումը, հետախուզվողի առևանգումը և ֆիզիկական ոչնչացումը: Արձանագրվել է, որ, եթե առաջինի դեպքում իրավապահ մարմինների կողմից որևէ հակաօրինական արարք չի կատարվում, ապա մյուս երկու դեպքերում այդ գործողություններն ակնհայտորեն հակաիրավական են: Ավելին՝ դրանք հանցավոր են, հղի են միջազգային լուրջ կոնֆլիկտներ առաջացնելու իրական վտանգով և անթույլատրելի:

Ատենախոսության ***երկրորդ գլուխը*** (Հանցանք կատարած անձանց հանձնելու իրավական հիմքերը) բաղկացած է երկու պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Արտահանձնման իրավական հիմքերը» վերատառությամբ, նախ, անդրադարձ է կատարվում արտահանձնման իրավական կարգավորման երկու հիմնական ուղղություններին՝ եվրոպական և անգլաամերիկյան: Ընդ որում, մանրամասն վերլուծության են ենթարկվում այդ ուղղությունների առանձնահատկություններն ու տարբերությունները, ինչպես նաև դրանց դրական և բացասական կողմերը:

Բացի դրանից, անդրադարձ է կատարվում այն հարցին, թե արտահանձնման ինստիտուտը իրավունքի որ ճյուղին է պատկանում: Նշվում է, որ մասնագիտական գրականության մեջ այս հարցին միասնական մոտեցում չկա: Այդ առումով ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել տարբեր հեղինակավոր գիտնականներ մոտեցումները, ովքեր արտահանձնումը դիտում են կամ որպես քրեական, կամ քրեադատավարական, կամ միջգային, կամ միջազգային քրեական, կամ սահմանադրական իրավունքի ճյուղ:

Արդյունքում արձանագրվում է, որ արտահանձնման իրավական կարգավիճակն առավել խորը պատկերացնելու համար անհրաժեշտ է դիտարկել, թե իրավունքի հիշյալ ճյուղերից յուրաքանչյուրը որքանով է կարգավորում արտահանձնումը և ինչ ասպեկտներ է պարունակում: Նշվում է, որ այն պայմանա-

կանորեն դիտարկվում է երկու օրենսդրական դաշտերում՝ միջազգային և ազգային, որոնք, ըստ էության, ոչ միայն սերտորեն փոխկապակցված են, այլև չեն կարող գործել իրարից առանձին: Որոշ երկրներում ազգային օրենսդրությունը լիովին բավարար է արտահանձնում իրականացնելու համար, իսկ մյուսներում երկկողմ պայմանագրի առկայությունը պարտադիր է:

Տվյալ պարագրաֆում մանրամասն քննարկվում են նաև արտահանձնման վերաբերյալ միջազգային օրենսդրությունը, ինչպես նաև ՀՀ կողմից կնքված պայմանագրերը: Հատուկ ուշադրություն է դարձվել նաև այն երկրներին, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չունի արտահանձնման մասին պայմանագրեր, սակայն բազմաթիվ ՀՀ քաղաքացիներ այցելում են այդ երկրներ և նրանց թվում կան նաև հետախուզման մեջ գտնվող անձիք: Այդ երկրներից առանձնացվել են ԱՄՆ-ը, Կանադան, Չինաստանը, Հնդկաստանը:

Բացի դրանից, վերլուծության են ենթարկվել այն կոնվենցիաները, որոնց մասնակցում է Հայաստանի Հանրապետությունը՝ 1957 թվականի Հանձնման մասին եվրոպական կոնվենցիան և ԱՊՀ երկրների Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին Քիշնևի կոնվենցիան:

Անդրադաձ է կատարվում նաև ազգային օրենսդրության այն դրույթներին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են արտահանձնմանը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆը՝ «Հանցանք կատարած անձանց հանձնելու քրեաիրավական հիմնախնդիրները» վերատառությամբ, ամբողջովին նվիրված է արտահանձնման քրեաիրավական կարգավորմանը: Արձանագրվում է, որ արտահանձնումը բավականին ընդգրկում կարգավորվում է նաև քրեական իրավունքով՝ ապահովելով արտահանձնման նյութաիրավական կողմը:

Մասնավորապես, մանրամասն ուսումնասիրվում և վերլուծվում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 16-ը՝ «Հանցանք կատարած անձանց հանձնելը», զուգահեռներ են անցկացվում միջազգային կոնվենցիաների համապատասխան դրույթների հետ: Փաստվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ արտահանձնմանն առնչվող հոդվածների որոշ դրույթներ կրկնվում են, որոշներում էլ առկա է անհամապատասխանություն, ինչը ճշգրտման կարիք ունի:

Վերլուծության են ենթարկվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնք անուղղակիորեն են առնչվում արտահանձնմանը, սակայն էական նշանակություն ունեն այդ գործընթացի իրականացման համար: Դրանցից առավել խորությամբ վերլուծվում է հոդված 5-ով սահմանված «Օրինականության սկզբունքը», որի կապակցությամբ պարզաբանվում է, որ արտահանձնում չի կարող իրականացվել, եթե հայցվող անձի կողմից կատարված արարքը, որը նախատեսված է հայցող երկրի քրեական օրենսդրությամբ, որքան էլ այն հանրորեն վտանգավոր է, սակայն սահմանված չէ հայցվող երկրի քրեական օրենսգրքով, կամ՝ հակառակը: Նշվում է, որ այս սկզբունքն առավել հայտնի է

որպես «Երկկողմ հետախնդման» պահանջ: Այս առումով կարևորվում է, որ պետք է համընկնեն ոչ թե հանցավոր արարքի անվանումը, այլ հատկանիշները: Միաժամանակ ընդգծվում է, որ չի բացառվում, որ համընկնեն հանցավոր արարքի թե՛ անվանումը, թե՛ հատկանիշները, սակայն հայցվող երկիրը կարող է բավարար չհամարել արտահանձնումն իրականացնելու համար՝ կախված տվյալ երկրների օրենսդրություններում հանցագործության առարկայի տարբերությունից: Որպես օրինակ, ներկայացվում է, որ որոշ նյութեր հայցող երկրում կարող են հանդիսանալ թմրանյութ, իսկ հայցվողում՝ ոչ: Նույնը կարելի է ասել նաև զենքի պարագայում: Անալոգիա անցկացնելով հարկերից խուսափելու համար արտահանձնում իրականացնելու և «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի Երկրորդ լրացուցիչ արձանագրությամբ տրված հոդված 5-ի փոփոխությունների հետ, եզրահանգում է արվում, որ հանցագործության առարկայի տարբերությունը չի կարող հիմք հանդիսանալ արտահանձնումը մերժելու համար:

Անդրադարձ է կատարվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք այլ հոդվածների համապատասխան դրույթներին՝ ընդգծելով դրանց նշանակությունն արտահանձնման գործընթացում:

Միաժամանակ հիմնավորվում է արտահանձնման մասին առանձին օրենքի ստեղծման անհրաժեշտությունը, որում պետք է ամփոփվեն քննարկվող ոլորտը կարգավորող բոլոր դրույթները, և որը կարող է հիմք հանդիսանալ միջազգային պայմանագրեր կնքելու և արտահանձնման գործընթացն իրականացնելու համար:

Ատենախոսության ***Երրորդ գլուխը*** (Արտահանձնման ենթակա անձինք: Հանձնելու հիքերն ու հանձնումը մերժելը), բաղկացած է երեք պարագրաֆից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Արտահանձնման ենթակա անձինք» վերատառությամբ, մանրամասն ուսումնասիրվում են արտահանձնման օբյեկտի հատկանիշները: Այս համատեքստում ընդգծվում է, որ, չնայած այն հանգամանքին, որ տարբեր երկրների քրեական օրենսգրքերում հետզհետե տարածում է գտնում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու գաղափարը, ինչպես նաև այն, որ միջազգային քրեական իրավունքում որպես հանցագործության սուբյեկտ ճանաչվում են նաև պետությունները, այդուհանդերձ, իրավաբանական անձինք և պետությունները արտահանձնման օբյեկտ չեն կարող հանդիսանալ:

Բացի այդ, վերլուծության են ենթարկվում հանցագործության սուբյեկտ հանդիսանալու համար պարտադիր իրավաբանական հատկանիշների և արտահանձնման օբյեկտ հանդիսանալու համար պահանջվող հատկանիշների առանձնահատկությունները:

Հատուկ ուշադրության է արժանանում պետության կողմից իր քաղաքացիներին հանձնելու հանգամանքը, որի կապակցությամբ եզրակացություն է արվում, որ հովանավորչության սկզբունքը ՀՀ-ում պետք է կրի օբլիգատիվ բնույթ,

առավել ևս, որ ոչ մի երկկողմանի պայմանագրում կամ միջազգային կոնվենցիայում Հայաստանի Հանրապետությունն իր վրա պարտավորություն չի վերցրել արտահանձնելու իր քաղաքացիներին, և այդ սկզբունքը պետք է տարածվի ոչ միայն ՀՀ քաղաքացիների, այլ նաև ազգությամբ հայերի վրա:

Անդրադարձ է կատարվում նաև երկքաղաքացիություն ունեցող անձանց արտահանձնման հանգամանքին: Փաստելով, որ երկքաղաքացիների արտահանձնումը որևէ կերպ սահմանված չէ միջազգային կամ ազգային օրենսդրությամբ, և այն, որ երկքաղաքացիներն օժտված են այն նույն իրավունքներով և պարտականություններով, ինչ մեկ պետության քաղաքացին, եզրակացություն է արվում, որ այդ անձինք կարող են ունենալ իրավական խնդիրներ՝ կատարելով իրենց պարտավորությունը մի պետության տարածքում, իսկ մյուսում՝ ոչ:

Տվյալ պարագրաֆում անդրադարձ է կատարվում նաև բնակության տարբեր կարգավիճակներ ունեցող անձանց (փախստականի, ապաստանի, կացության կարգավիճակ ունեցողների) արտահանձնմանը՝ ընդգծելով այդ անձանց արտահանձնման գործընթացն առավել մանրամասն պարզաբանելու անհրաժեշտությունը:

Վերլուծվում են նաև անձեռնմխելիության որոշակի տեսակներից օգտվող անձանց արտահանձնման հիմնախնդիրները: Այդ առումով ընգծվում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (հոդված 5) սահմանված է, որ օրենսգրքի և քրեական դատավարության նորմեր պարունակող այլ օրենքների գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դիվանագիտական արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին կամ օրենսգրքի 445-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական ընդդատությունից ազատված այլ անձանց վրա՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի, եզրակացություն է արվում, որ դա չի կարող դիտարկվել որպես այդ անձանց արտահանձնումը մերժելու հիմք:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Հանձնելու հիմքերը և պարտադիր պայմանները» վերատառությամբ, մանրամասն քննարկվում են այն պայմանները, որոնք պարտադիր են արտահանձնում իրականացնելու համար:

Ընդգծվում է, որ այդ պարտադիր պայմաններն են՝

1) այն արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է հայցվող անձը, պետք է հանցագործություն համարվի թե հայցող, թե հայցվող երկրների օրենսդրությամբ (երկկողմ հետապնդման կանոն),

2) կատարված հանցագործությունն ուղղակիորեն սահմանված է արտահանձնման մասին պայմանագրում կամ համապատասխանում է սահմանված պատասխանատվության ծանրության աստիճանին (պատասխանատվության նվազագույն ժամկետի կանոն),

3) արտահանձնման ենթարկված անձը կարող է քրեական պատասխանատվության, պատժի ենթարկվել կամ փոխանցվել երրորդ երկրին միայն այն հանցագործության համար, որի համար արտահանձնման մասին հայցադիմում է ներկայացվել (հատուկ կանոն):

Նշվում է, որ երկկողմ հետապնդման կանոնը մանրամասն քննարկվել է ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում:

Պատասխանատվության նվազագույն ժամկետի կանոնը վերլուծելիս, ներկայացվում են այն հիմնական մոտեցումները, որոնք կիրառվում են գործնականում այս կանոնն ամրագրելիս, ինչպես նաև արտասահմանյան երկրների մոտեցումները, միջազգային կոնվենցիաների դրույթները և Հայաստանի Հանրապետության մոտեցումները՝ ազգային օրենսդրության և միջազգային պայմանագրեր կնքելիս:

Այդ առումով հատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածներ 64-ի (օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժի նշանակում), 70-ի (պատիժը պայմանականորեն չկիրառելը), 76-ի (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը), 77-ի (պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը) կիրառումը արտահանձնման ենթարկված անձի նկատմամբ հնարավոր է դիտվի որպես պատժի նվազագույն չափի պայմանի հետ անհամատեղելի: Սակայն շեշտվում է, որ նման անհամատեղելիության որևէ խնդիր չի կարող լինել, քանի որ պատժի նվազագույն պայմանը վերաբերում է քրեական օրենսգրքով սահմանված, այլ ոչ թե դատարանի կողմից նշանակվող պատժաչափին:

Տվյալ պարագրաֆի շրջանակներում մանրամասն անդրադարձ է կատարվում նաև հատուկ կանոնի առանձնահատկություններին և դրա նշանակությանը:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Հանձնումը մերժելու հիմքերը» վերտառությամբ, նախ և առաջ ներկայացվում են արտահանձնումը մերժելու վերաբերյալ տարբեր մոտեցումները, որոնց ամփոփման արդյունքում եզրակացություն է արվում, որ դրանք կարող են կրել և՛ օբյեկտիվ, և՛ ֆակուլտատիվ բնույթ: Նշվում է նաև, որ օրենսդիրն այս երկու կատեգորիաները սահմանել է հետևյալ կերպ՝ «Անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի կատարումը մերժվում է» և «Անձի հանձնման մասին խնդրանքի կատարումը կարող է մերժվել»:

Այնուհետև ներկայացվում են «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ արտահանձնումը մերժելու հիմքերը, մանրամասն վերլուծության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված հիմքերը: Այդ առումով փաստվում է, որ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում սահմանված՝ արտահանձնումը մերժելու հիմքերի զգալի մասը, նախ, կրկնվում են, բացի այդ, կան նաև այնպիսիները, որոնց միջև առկա են որոշակի հակասու-

թյուններ: Որպես օրինակ է ներկայացվում այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 16-ի 4-րդ մասով մահապատժի դատապարտման սպառնալիքի առկայության դեպքում անձի արտահանձնումը մերժելը կրում է ֆակուլտատիվ, իսկ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 488-ի 4-րդ մասով՝ օբլիգատիվ բնույթ, ինչը մոտեցումների ընդհանրացման կարիք ունի:

Տվյալ պարագրաֆում վերլուծության են ենթարկվում նաև արտահանձնումը մերժելու հիմքերը, ինչի կապակցությամբ հատուկ ուշադրություն է դարձվում քաղաքական հանցագործներին չհանձնելու սկզբունքին: Ընդգծվում է այն հանգամանքը, որ գոյություն չունի քաղաքական հանցագործությունների միասնական հանընդգրկուն սահմանում, և պետությունների իշխանությունները, օգտվելով այս հանգամանքից, կարող են շահարկել այն: Միաժամանակ տարբեր հեղինակավոր գիտնականների և երկրների օրենսդիր մարմինների մոտեցումների ուսումնասիրության հիման վրա փորձ է կատարվում տալու քաղաքական հանցագործության սահմանման սեփական տարբերակը:

Պարագրաֆի վերջում ներկայացվում են արտահանձնումը մերժելու որոշ հիմքեր, որոնց նախատեսումը Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ, ըստ հեղինակի, առավել նպատակահարմար է:

Աշխատանքի եզրափակիչ մասում ամփոփվում են հեղինակի հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները:

Ատենախոսական սույն հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ գիտական հոդվածներում՝

- 1) Հանցանք կատարած անձանց հանձնելու հասկացությունը, դերը և նշանակությունը // Պետություն և իրավունք, 2013, № 2-3 (60-61), էջեր 50-57:
- 2) Սեփական քաղաքացիների արտահանձնումը մերժելու և երկքաղաքացիների արտահանձնման հիմնախնդիրները // Բանբեր Երևանի համալսարանի / Իրավագիտություն, 2014, № 2 (143), էջեր 44-52 (համահեղինակ՝ Ս.Վ. Առաքելյան):
- 3) Երկկողմ հետապնդումը որպես հանցանք կատարած անձի արտահանձնման պայման // Բանբեր Երևանի համալսարանի / Իրավագիտություն, 2014, № 3, էջեր 38-48:
- 4) Պատժի նվազագույն ժամկետի կիրառման իրավական հիմքերն արտահանձնման գործընթացում // Պետություն և իրավունք, 2014, № 3-4(65-66), էջեր 68-73:
- 5) Քաղաքական հանցագործությունները՝ որպես արտահանձնումը մերժելու հիմք // Ղատական իշխանություն, 2014, № 12/186, էջեր 40-43:

УГОЛОВНО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ВЫДАЧИ
ЛИЦ, СОВЕРШИВШИХ ПРЕСТУПЛЕНИЕ

АННОТАЦИЯ

Диссертация посвящена исследованию уголовно-правовых проблем выдачи лиц, совершивших преступление. В результате исследования представлен ряд научных выводов, которые позволяют по новому взглянуть на исследуемый вопрос. В диссертации на научном уровне представлены правовые основы выдачи лиц, предусмотренные международными договорами и конвенциями, а также законодательством РА и зарубежных стран. В частности, подчеркивается необходимость гармонизации (имплементации) понятия “выдача лиц совершивших преступление”. Особое внимание уделяется таким аспектам, как отказ в выдаче своих граждан, а также международные и внутригосударственные подходы различных стран в этой сфере.

Научная новизна диссертации отражена в следующих положениях:

- Необходимым условием для выдачи должен считаться факт двустороннего преследования, о наличии которого однозначно можно утверждать даже в тех случаях, когда по законодательствам двух стран совпадают как наименование преступного деяния, так и признаки, которые запрашиваемая сторона может считать не удовлетворяющими для осуществления выдачи, в связи с разницей в законодательных определениях предмета преступления.

- В международных договорах о выдаче, как правило, не предусматривается, распространяются ли эти договора на случаи выдачи лиц, обвиняемых за совершение преступления до подписания и ратификации этих договоров, так как не исключено, что оно будет идентифицировано с принципом неприменения обратной силы закона, устанавливающего преступность деяния, усиливающего наказание или иным образом ухудшающего положение лица, совершившего преступление, что недопустимо.

- Согласно положениям ч.2 ст.15 Уголовного Кодекса Республики Армения, граждане Республики Армения, находящиеся вне пределов Республики Армения, и лица без гражданства, постоянно проживающие в Республике Армения, за совершение преступлений против мира и безопасности человечества, а также коррупционного рода, предусмотренных Уголовным Кодексом, подлежат уголовной ответственности по Уголовному кодексу Республики Армения, независимо от того, предусмотрено или нет такое деяние уголовным законом государства по месту совершения преступления. Учитывая, что перечень вышеуказанных преступлений периодически может меняться, целесообразно не определять исчерпывающий перечень, а обобщать их по видам преступлений, определенных международными конвенциями.

- В разных странах предусмотренный законом возраст лиц, подлежащих уголовной ответственности, неодинаков, поэтому не исключено, что может возникнуть необходимость выдачи осужденного, являющегося субъектом преступления в одном государстве, с целью дальнейшего несения назначенного наказания, государству, гражданином которого он является, однако который законодательством этого государства не является субъектом преступления. Поскольку как международными конвенциями, так и законодательством Республики Армения никакого положения, регулирующего это обстоятельство, не предусмотрено, необходимо принять соответствующий международный документ, который урегулирует решение данного вопроса. Как возможный вариант решения, предлагается после выдачи этого лица применить меры безопасности, предусмотрев их в Уголовном Кодексе Республики Армения.

- Принцип отказа в выдаче собственных граждан должен нести облигативный (обязательный) характер (речь не идет о передаче лиц международным трибуналам). Более того, он должен распространяться также на лиц армянской национальности, независимо от их гражданства.

- Важное значение для процедуры выдачи имеет также уточнение времени получения гражданства, что законодательством республики Армения никак не регулируется. Следовательно, необходимо законодательно предусмотреть, что гражданство запрашиваемого лица следует определять на момент получения соответствующим государственным органом ходатайства, приостанавливая процедуру присвоения гражданства.

- По законодательству Республики Армения необходимо предусмотреть также положение, регулирующее выдачу лиц, совершивших преступление, международным трибуналам, так-как в настоящее время для подобных случаев не уяснены действия компетентных органов Республики Армения при обнаружении на территории РА лиц, разыскиваемых на международном уровне по делам, рассматриваемым международными трибуналами.

- В ч.2 ст.10 Уголовного Кодекса Республики Армения предусмотрен всеобщий принцип «non bis in idem», однако было бы целесообразным определить исключение из этого положения. В частности, в ст.15 Уголовного Кодекса Республики Армения необходимо предусмотреть такое положение, согласно которому, лицо, совершившее тяжкое и особо тяжкое преступление против Республики Армения или в отношении ее гражданина, независимо от места его совершения, подлежит ответственности по Уголовному кодексу Республики Армения, если за то же деяние в отношении него было осуществлено уголовное преследование или он был привлечен к ответственности в ином государстве, которое, однако преследовало цель освобождения его от привлечения к ответственности в Республике Армения, или было проведено такое следствие, которое не соответствует принципам международного правосудия.

ARA FIDANYAN

**CRIMINAL-LEGAL REGULATION OF THE EXTRADITION
OF THE PERSONS COMMITTED CRIME**

ANNOTATION

The thesis is dedicated to the criminal-legal issues of extradition of individuals who have committed crime. In the result of the research, a number of scientific conclusions are presented which allow us to view the considered issue in anew.

In the thesis, in a scientific level, legal grounds for the extradition of persons are presented stipulated by international treaties and conventions as well as by the legislations of the Republic of Armenia and foreign countries. In particular, the necessity of implementation of the concept “extradition of offenders” is emphasized. Special attention is drawn to such aspects as the rejection of extradition of the citizens, as well as international and intergovernmental principles of various countries in this sphere.

The scientific innovation of the thesis is expressed in the following provisions:

A mandatory prerequisite for the extradition is to be considered the circumstance of a bilateral prosecution, even in the cases when both the title and the features of the offence coincide in the legislations of two countries which might be considered not sufficient by the requesting country for extradition related with the differences of the object of crime in the legislations.

In international treaties on extradition, as a rule, it is not defined whether they apply to the cases of extraditions of persons who were convicted for committing crime before signing and ratifying the treaty, as it is not excluded to be identified with the principle of not applying the retroactive effect of the law defining the criminality of the action, strengthening the punishment or aggravating the condition of the offender in any other way which is unacceptable.

In accordance with the provisions of article 15 point 2 of the Criminal Code of RA, the citizens of the Republic of Armenia being outside the territory of RA and persons permanently residing in RA and not having a citizenship, are subject to criminal responsibility for committing crimes directed against human security and peace as well as corruption-related crimes according to the Criminal Code of RA, regardless of the crime being stipulated or not by the Criminal Code of the country the crime was committed in. Taking into consideration the fact that the list of the above mentioned offenses can periodically change, it's expedient not to define a comprehensive list but to generalize them according to the offences specified by the international treaties.

The age of persons subject to criminal liability varies in different countries so it isn't excluded that it might be necessary to extradite the convicted person being a subject of crime in a definite country, to the country of his citizenship with the aim of serving his sentence though not being considered a subject of crime according to the legislation of that country. As there is no provision regulating this circumstance either by international conventions or by national legislation of RA, it's necessary to adopt an appropriate international document which will regulate the solution of the mentioned issue. As a possible solution we suggest to apply security measures after the transmission of a person, stipulating them in the conception of the Criminal Code of RA.

The principle of rejecting the extradition of own citizens must bear an obligatory character (this doesn't refer to the transmission of persons to international tribunals). Moreover, it must be spread on Armenian nationals, regardless of their citizenship.

The clarification of the time period of receiving citizenship of the requested person is important for the extradition which is not regulated by the legislation of RA in any way. Therefore, it is necessary to define an appropriate provision by the legislation of RA and determine the citizenship of the requested person at the moment of receiving the request for extradition from the competent state petition authority and suspend the process of granting citizenship to the person from that period.

It is necessary to define a provision by the legislation of RA concerning the transmission of persons to the international tribunals, since at present in cases of establishment of persons wanted on international level the activities of competent authorities of RA are not definite.

By the article 10 part 2 of the Criminal Code of RA the "non bis in idem" common principle is stipulated, nevertheless, it's advisable to define an exception of the provision as well. In particular, it's necessary to provide the article 15 of the Criminal Code of RA with such a provision according to which the person having committed grave and particularly grave offences against the Republic of Armenia and its citizens regardless of the place of its commitment, is subject to criminal liability in accordance with the Criminal Code of RA, in case if a criminal prosecution was conducted against him or if he was convicted for this offense in another country which was, nevertheless, aimed to free the latter from the criminal liability in the RA or if the conducted investigation didn't comply with the principles of international justice.